ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2026 թվականի թիվ 72-Ա

ք.Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի մայիսի 22-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 20 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս 2026 թվականի մայիսի 21-ին իրականացրել է «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից հեռարձակվող «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» տեսալսողական ծրագրի 2026 թվականի մայիսի 20-ի տեսագրության մշտադիտարկում:

Մշտադիտարկման արդյունքում հայտնաբերվել են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի և Օրենքի պահանջների առերևույթ խախտման հատկանիշներ, և 2026 թվականի մայիսի 22-ին կազմվել է մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն (այսուհետ՝ Արձանագրություն):

Ըստ Արձանագրության՝

««Լրաբեր» լրատվական հաղորդման ընթացքում՝ ժամը 16:47:10-16:50:49, ժամը 20:55:03-20:58:44 (կրկնություն) և ժամը 23:54:57-23:58:38 (կրկնություն), ներկայացվել է տեղեկատվություն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության վերաբերյալ անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվության ներկայացման պահանջի խախտման տարրերով: *Մասնավորապես՝*

Հաղորդավար. «Ընդդիմության գլխավորները ռսի ագենտ են, ծառայում են օտար ուժերին, ուզում են պետությունը քանդել: Այսօր ևս նույն ծեծված մեղադրանքներն է հնչեցրել մեկը, ում պաշտոնավարման վրա դողում են Ալիևն ու Էրդողանը, մարդկանց նկատմամբ, ումից դողում են այդ նույն Էրդողանն ու Ալիևը: Թուրքի սիրելի, թուրքի փայփայած ՔՊ-ի ղեկավարը սիրո սրտիկներն ուղարկել է իրեն ընտրողներին՝ մաղձը թափել բոլոր նրանց վրա ով հանդգնում է մտածել այլ կերպ, քան ինքը, այս անգամ՝ Լոռու մարզում: Այս ամենը ստիպված է եղել լսել և դիտել Նաիրա Փայտյանը (լրագրող - *նշումը մշտադիտարկողի*)՝ մասնագիտական բերումով»:

Լրագրող. «...կանգնեց մեքենայի թափքին, և սկսվեց անխուսափելին ... և սա ասում է մեկը, որը հարձակվել է կնոջ վրա, ինչ է թե այդ կինը նրան ստիպել է առերեսվել

ճշմարտության հետ, ասում է մեկը, որը հրապարակավ արհամարհել է այն մարդուն, որի թոռանը ուղղակի այրել են՝ մնալով անպատիժ, ասում է մեկը, որի առաջ մարդու բերանը ձեռքերով փակելով հեռացրել են, որ իր քարոզը չխանգարի: …Հասավ քարոզի կուլմինացիային՝ վատաբանման և սևացնելու փուլին: … Ընդդիմությանը երկու բոթասի մակարդակի իջեցնողին հիշեցնենք, իր՝ 2018 թվականի կենցաղային մակարդակը: … և թե ինչպես այդ մակարդակը կտրուկ բարձրացավ երկրի ղեկավար դառնալուց հետո:»»:

Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ Արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես ապացույց:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Արձանագրությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2026 մայիսի 22-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 20 վարչական վարույթը:

Հանձաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 25.05.2026թ. թիվ Ե/04/04.1/384-26 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող է ներկայացնել իր պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը նշված գրության և հարուցված վարչական վարույթի վերաբերյալ պարզաբանում կամ բացատրություն չի ներկայացրել:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«3. Ընտրությունների ժամանակ հանրային հեռարձակողները պարտավոր են թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար ապահովել ոչ խտրական պայմաններ:

Հանրային հեռարձակողների լրատվական հաղորդումներում թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության վերաբերյալ ներկայացվում է անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն: Ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) և թեկնածուների վերաբերյալ նախընտրական քարոզչության հետ չկապված հրապարակումները պետք է լինեն առավելագույնը չեզոք: ...»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է.

«Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթները հավասարապես տարածվում են նաև թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող մասնավոր հիմունքներով հեռուստառադիոհեռարձակում, այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող մյուս տեսալսողական մեդիածառայություն մատուցողների վրա՝ անկախ սեփականության ձևից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս բոլոր հեռարձակողների վրա: ...»:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 23-րդ կետերը սահմանում են.

«1) տեսալսողական մեդիածառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար.

23) հեղինակազորում՝ կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տրվող փաստաթղթի տրամադրում.»:

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է.

«Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝

1) տեսալսողական հաղորդումները հեռարձակվում են ընտրությունների (հանրաքվեների) մասին օրենսդրությանը համապատասխան.»:

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է.

«Հեռարձակողի լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների (հանրաքվեի քարոզչության կողմերի) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության վերաբերյալ պետք է ներկայացվի անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն՝ պահպանելով լուսաբանման համար հավասար հնարավորություններ ապահովող Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով սահմանված կարգերը.»:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ վերահսկում է Հեռարձակողների կողմից նախընտրական քարոզչության՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանումը, իսկ նույն հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են.

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

Հանձնաժողովի 2026 թվականի փետրվարի 11-ի թիվ 19-Ա որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանության» (այսուհետ՝ Մեթոդաբանություն) 5-րդ կետը, ի թիվս այլնի, սահմանում է.

«Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրական օրենսդրության պահանջների ապահովման նպատակով Հեռարձակողներն իրենց տեսալսողական հաղորդումներում պետք է ապահովեն.

3) կարծիքների անաչառությունը, կշռադատվածությունը և հակառակ տեսակետների ներկայացումը:»:

Մեթոդաբանության 7-րդ կետի համաձայն՝

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Հեռարձակողների կողմից ընտրական օրենսդրության պահանջների համապատասխանության մշտադիտարկման արդյունքում գնահատվում է՝

7) լրատվական թողարկումներում և քաղաքական հաղորդումներում ընտրությունների նախընտրական քարոզչության միջոցառումների լուսաբանման գնահատականներից զերծ և անկողմնակալ լինելու հանգամանքը, հավասարության և ոչ խտրական սկզբունքի պահպանումը.

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱԼԻՔ» ՍՊ ընկերությունը, հանդիսանալով տեսալսողական մեդիածառայություն մատուցող՝ Հեռարձակող, պարտավոր է պահպանել օրենքներով սահմանված կարգավորող դրույթները:

Այսպես, քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2020 թվականից հանդիսանում է տեսալսողական մեդիածառայություն մատուցող՝ Հանձնաժողովի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 110-Ա որոշմամբ հեղինակազորված իրավաբանական անձ (հեղինակազորման վկայագրի սերիան, համարը՝ ՀՎ № 021), որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են վարքագծի կանոններ, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, ինչպես նաև

Հեռարձակողը պատասխանատվություն է կրում օրենսդրության կիրառման ապահովման համար՝ սույն պարագայում՝ Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով ամրագրված պահանջները:

Այսպես, հիմք ընդունելով օրենքների դրույթները և ձեռք բերված փաստերը՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» տեսալսողական ծրագրի «Լրաբեր» լրատվական հաղորդման ընթացքում ընտրություններին մասնակցող քաղաքական ուժի և նրա ներկայացուցիչների վերաբերյալ ներկայացվել է գնահատողական և անկողմնակալության պահանջին չհամապատասխանող տեղեկատվություն, ինչով խախտվել են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի, ինչպես նաև «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի պահանջները:

Նշենք, որ նախընտրական քարոզչության ընթացքում Հեռարձակողների կողմից ընտրողներին պետք է ներկայացվի լիարժեք անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն, և նույնիսկ այն քաղաքացիները, որոնք գուցե հանդիսանում են միայն մեկ տեսալսողական ծրագրի սպառող, պետք է հնարավորություն ունենան այդ ծրագրի միջոցով ստանալ ընդհանուր, ամբողջական պատկերացում նախընտրական քարոզարշավի ընթացքում բոլոր մասնակից քաղաքական ուժերի և նրանց թեկնածուների վերաբերյալ՝ հաշվի առնելով ընտրական գործընթացների նկատմամբ հանրային բարձր հետաքրքրությունն ու դրանց առանձնահատուկ նշանակությունը ժողովրդավարական հասարակությունում:

Ընդ որում, «գնահատականներից զերծ տեղեկատվություն» պահանջը ենթադրում է, որ լրատվական հաղորդումը պետք է սահմանափակվի փաստական տեղեկությունների փոխանցմամբ և չպարունակի լրագրողի, հաղորդավարի կամ հեռարձակողի կողմից քաղաքական ուժերի, թեկնածուների կամ նրանց գործունեության վերաբերյալ արժևորող, նսեմացնող, վարկաբեկող կամ գովաբանական բնույթի դատողություններ: Նույն կերպ, «անկողմնակալության» սկզբունքը պահանջում է, որ տեղեկատվությունը ներկայացվի հավասարակշռված, չեզոք և քաղաքական մրցակցության մասնակիցներից որևէ մեկի օգտին կամ դեմ ուղղված շեշտադրումներից զերծ ձևով:

Քննարկվող հարցի համատեքստում Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ միջազգային փորձին: Այսպես, «Միջազգային ընտրական չափանիշների կիրառումը» վերտառությամբ Եվրոպայի խորհրդի ձեռնարկի համաձայն՝

«Ընտրական քարոզարշավը ընտրողների կարծիքի ձևավորման համար առաջնային և առանցքային գործոնն է:»[1]:

«(...) ընտրողների քվեի համար պայքարելիս, թեկնածուները և քաղաքական կուսակցությունները, մասնավորապես, պետք է ունենան գործելու հավասար պայմաններ, ինչպես նաև կարծիք ունենալու և արտահայտվելու ազատություն:»[2]:

---

[1]«Միջազգային ընտրական չափանիշների կիրառումը»//Եվրոպայի խորհրդի ձեռնարկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար/Եվրոպայի խորհուրդ, նոյեմբեր 2016թ., Տպագրված է Եվրոպայի խորհրդի կողմից, 87 էջ: https://rm.coe.int/using-international-election-standards-arm-final/1680712230 [8/4/2025]

[2]Տե՛ս նույն ձեռնարկի, նույն էջում:

«Ընտրական քարոզարշավի ընթացքում բոլոր քաղաքական ուժերը և թեկնածուները պետք է ունենան քաղաքական քարոզարշավում ներգրավվելու ազատություն և իրենց ծրագրերը ընտրազանգվածի շրջանում ազատ և հավասար պայմաններում տարածելու հնարավորություն (ԺՀՄԻԳ, 1966 թ. Հոդված 25-6, ԺԸԱՄԻ 2014ա, 214): Սա ենթադրում է քարոզարշավի համար հավասար ժամանակի տրամադրում և պետության կողմից թեկնածուներին հավասար վերաբերմունքի արժանացնելու իր պարտավորության կատարում՝ հաշվի առնելով թերներկայացված խմբերի հատուկ կարիքները և հիմնարար ազատությունների տրամադրումը, և, իհարկե, թեկնածուների՝ արդար վարքագիծ դրսևորելու հանձնառություն:»[3]:

«(...) պետությունները պետք է կանխեն լրատվամիջոցների ոչ պատշաճ գերիշխող դիրքը կամ կենտրոնացումը մասնավոր լրատվական խմբերի ձեռքում՝ մենաշնորհային այնպիսի իրավիճակներում, որոնք կարող են խոչընդոտել տեղեկատվական աղբյուրների և տեսակետների բազմազանության ապահովմանը (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, 1981-2014թթ., ԸՄ 34, պարբ. 40): Լրատվամիջոցների սեփականության ողջ ծավալը պետք է թափանցիկ լինի, ինչը հնարավորություն կտա քաղաքացիներին հասկանալ իրենց տեղեկատվական աղբյուրներում հանդիպող հնարավոր կանխակալ դիրքորոշումները (Նախարարների կոմիտե, 1994թ., Թիվ 1 ուղենիշ):»[4]:

Տվյալ պարագայում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով և Հանձնաժողովի կողմից ընդունված Մեթոդաբանության հիմքում դրված են հենց այս պայմաններն ու իրավունքները կիրառելու համար անհրաժեշտ դրույթները:

Այսպիսով արձանագրում ենք, որ Հեռարձակողի կողմից թույլ է տրվել իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը սույն օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 56-րդ հոդվածը սահմանում է.

«1. Սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում

[3] Տե՛ս նույն ձեռնարկի, նույն էջում:

[4] Տե՛ս նույն ձեռնարկի 109 էջ:

հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերը, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 23-րդ կետերը, 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ, 12-րդ և 14-րդ կետերը, 42-րդ հոդվածի 1-ին, 8-րդ, 9-րդ, 18-րդ մասերը, 56-րդ հոդվածը, Հանձնաժողովի 2026 թվականի փետրվարի 11-ի թիվ 19-Ա որոշմամբ հաստատված Մեթոդաբանության 5-րդ և 7-րդ կետերը և ղեկավարվելով Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ *գրավոր նախազգուշացում:*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Գ.ՄԱՄԻԿՈՆՅԱՆ**

2026թ. հունիսի 12
ք. Երևան